

II

*(Ոչ օրենսդրական ակտեր)***ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ**

**«Փոշեկուլների էներգապիտակավորման մասին» Եվրոպական պառլամենտի
եւ Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 թվականի մայիսի 3-ի
թիվ 665/2013 ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՄ)
(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,
հաշվի առնելով «Էներգասպառող եւ էներգախնայող արտադրատեսակների
կողմից էներգիայի եւ այլ ռեսուրսների սպառման վերաբերյալ՝ պիտակավորման
եւ արտադրատեսակների մասին ստանդարտ տեղեկությունների միջոցով նշում
կատարելու մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010 թվականի
մայիսի 19-ի 2010/30/ԵՄ հրահանգը¹ եւ մասնավորապես՝ դրա 11-րդ հոդվածը,
քանի որ՝

- 1) 2010/30/ԵՄ հրահանգով պահանջվում է, որ Հանձնաժողովն ընդունի
պատվիրակված ակտեր՝ կապված էներգասպառող եւ էներգախնայող
այնպիսի արտադրատեսակների պիտակավորման հետ, որոնք ունեն
էներգիայի խնայողության զգալի ներուժ եւ համարժեք ֆունկցիոնալությամբ
արդյունավետության մակարդակներում էական տարբերություն.

¹ՊՏ L 153, 18.6.2010թ., էջ 1:

- 2) փոշեկուլների կողմից օգտագործվող էներգիան կազմում է Միությունում ընդհանուր էներգիայի պահանջարկի զգալի մասը: Առկա է փոշեկուլների կողմից էներգիայի սպառման ծավալների նվազեցման մեծ հնարավորություն.
- 3) խոնավ մաքրման, խոնավ եւ չոր մաքրման, ռոբոտ, արդյունաբերական, կենտրոնական ու մարտկոցով աշխատող փոշեկուլները եւ հատակափայլիչներն ու դրսի համար նախատեսված փոշեծծիչ սարքերն ունեն որոշակի առանձնահատկություններ եւ հետեւաբար պետք է հանվեն սույն կանոնակարգի գործողության ոլորտից.
- 4) պիտակի վրա ներկայացվող տեղեկությունները պետք է ստացվեն չափման հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի ընթացակարգերի միջոցով, երբ հաշվի են առնվում համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման մեթոդները, ներառյալ առկայության դեպքում՝ ներդաշնակեցված ստանդարտները, որոնք ընդունվել են «Եվրոպական ստանդարտացման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1025/2012 կանոնակարգի (ԵՄ) I հավելվածում՝ թվարկված Ստանդարտացման եվրոպական կազմակերպությունների կողմից.
- 5) սույն կանոնակարգով պետք է սահմանվեն փոշեկուլների պիտակների միասնական ձեւը եւ բովանդակությունը.
- 6) բացի այդ, սույն կանոնակարգով պետք է սահմանվեն փոշեկուլների տեխնիկական փաստաթղթերին եւ տեղեկաթերթիկներին ներկայացվող պահանջները.
- 7) ավելին, սույն կանոնակարգով պետք է սահմանվեն փոշեկուլների հեռակա վաճառքի ցանկացած ձեւի դեպքում, գովազդում եւ տեխնիկական գովազդային նյութերում տրամադրվելիք տեղեկություններին ներկայացվող պահանջները.

¹ ՊՏ L 316, 14.11.2012թ., էջ 12:

- 8) անհրաժեշտ է նախատեսել սույն կանոնակարգի դրույթների վերանայումը՝ հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը

1. Սույն կանոնակարգով սահմանվում են էլեկտրական ցանցից սնվող փոշեկուլների, այդ թվում՝ հիբրիդային փոշեկուլների պիտակավորմանը եւ արտադրատեսակների մասին լրացուցիչ տեղեկությունների տրամադրմանը ներկայացվող պահանջները:
2. Սույն կանոնակարգը չի կիրառվում հետեւյալի նկատմամբ՝
 - ա) խոնավ մաքրման, խոնավ եւ չոր մաքրման, մարտկոցով աշխատող, ռոբոտ, արդյունաբերական կամ կենտրոնական փոշեկուլներ.
 - բ) հատակափայլիչներ.
 - գ) դրսի համար նախատեսված փոշեծծիչներ:

Հոդված 2

Սահմանումները

Ի հավելումն 2010/30/ԵՄ հրահանգի 2-րդ հոդվածով սահմանված սահմանումների՝ սույն կանոնակարգի նպատակներով կիրառվում են հետեւյալ սահմանումները՝

- 1) «փոշեկուլ» նշանակում է սարք, որը հողը հեռացնում է մաքրման ենթակա մակերեսից՝ միավորի ներսում առաջացող ցածր ճնշմամբ ստեղծված օդի հոսքի միջոցով.

- 2) «հիբրիդային փոշեկուլ» նշանակում է փոշեկուլ, որը կարող է աշխատել թե՛ էլեկտրական ցանցով, թե՛ մարտկոցներով.
- 3) «խոնավ մաքրման փոշեկուլ» նշանակում է փոշեկուլ, որը մակերեսից հեռացնում է չոր եւ (կամ) խոնավ նյութը (հողը)՝ մաքրման ենթակա մակերեսին քսելով ջրային հիմքով մաքրող նյութը կամ գոլորշին եւ այն հեռացնելով, իսկ հողը՝ միավորի ներսում առաջացող ցածր ճնշմամբ ստեղծված օդի հոսքով, այդ թվում՝ փոշեկուլների այն տեսակները, որոնք հայտնի են որպես ցողելու միջոցով հեռացնող փոշեկուլներ.
- 4) «խոնավ եւ չոր մաքրման փոշեկուլ» նշանակում է փոշեկուլ, որը նախատեսված է 2,5 լիտրից ավելի հեղուկի ծավալը հեռացնելու համար՝ չոր մաքրման փոշեկուլի ֆունկցիոնալության հետ համակցությամբ.
- 5) «չոր մաքրման փոշեկուլ» նշանակում է փոշեկուլ, որը նախատեսված է հիմնականում չոր հողը (փոշին, մանրաթելը, թելերը) հեռացնելու համար, այդ թվում՝ մարտկոցով աշխատող ակտիվ ծայրափողակով սարքավորված տեսակները.
- 6) «մարտկոցով աշխատող ակտիվ ծայրափողակ» նշանակում է մաքրող գլխիկ՝ ապահովված մարտկոցներով աշխատող խառնող սարքավորմամբ, որն օգնում է մաքրել կեղտը.
- 7) «մարտկոցով աշխատող փոշեկուլ» նշանակում է փոշեկուլ, որն աշխատում է միայն մարտկոցներով.
- 8) «ռոբոտ փոշեկուլ» նշանակում է մարտկոցով աշխատող փոշեկուլ՝ բաղկացած շարժական մասից ու հիմնական մասից եւ (կամ) իր աշխատանքին օժանդակող այլ պարագաներից, որը կարող է սահմանված պարագծում աշխատել առանց մարդու միջամտության.
- 9) «արդյունաբերական փոշեկուլ» նշանակում է արտադրական գործընթացի մաս կազմելու համար նախատեսված փոշեկուլ, որը նախատեսված է վտանգավոր նյութերը հեռացնելու, ծանր փոշին շենքից, ձուլարանից,

հանքարդյունաբերության կամ սննդի արդյունաբերության ոլորտում հեռացնելու համար, եւ որն արդյունաբերական մեքենայի կամ գործիքի եւ (կամ) առետրային փոշեկուլի մաս է կազմում՝ 0,50 մ-ը գերազանցող լայնությամբ գլխիկով.

- 10) «առետրային փոշեկուլ» նշանակում է կենցաղային մասնագիտական սպասարկման նպատակների համար փոշեկուլ, որը նախատեսված է օգտագործվելու ոչ մասնագետի, մաքրող անձնակազմի կամ պայմանագրային մաքրողների կողմից գրասենյակներում, խանութներում, հիվանդանոցներում եւ հյուրանոցային միջավայրերում օգտագործման համար, եւ որն արտադրողի կողմից նշվել է որպես այդպիսին Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2006/42/ԵՀ հրահանգին առնչվող իր Համապատասխանության հայտարարագրում¹.
- 11) «կենտրոնական փոշեկուլ» նշանակում է փոշեկուլ, որն ունի շենքի ներսում գտնվող ցածր ճնշման ֆիքսված (ոչ շարժական) աղբյուր եւ ֆիքսված դիրքերում գտնվող ռետինե կցախողովակներ.
- 12) «հատակափայլիչ» նշանակում է էլեկտրական սարք, որը նախատեսված է հատակի որոշակի տեսակները պաշտպանելու, հարթեցնելու եւ (կամ) դրանց փայլ հաղորդելու համար, եւ սովորաբար օգտագործվում է փայլեցնող միջոցի հետ համակցությամբ, որը սարքի միջոցով շփվում է հատակին եւ սովորաբար ունենում է փոշեկուլի օժանդակ ֆունկցիոնալություն.
- 13) «դրսի համար նախատեսված փոշեկուլ» նշանակում է սարք, որը նախատեսված է դրսում օգտագործման համար՝ միավորի ներսում առաջացող ցածր ճնշմամբ ստեղծված օդի հոսքի միջոցով հավաքիչում այնպիսի մնացորդներ, ինչպիսիք են խոտի կտորները եւ տերեւները հավաքելու համար, եւ որը կարող է պարունակել մամլիչ սարք եւ կարող է աշխատել նաեւ որպես օդափուք.

¹ ՊՏ L 157, 9.6.2006թ., էջ 24:

- 14) «ամբողջությամբ մարտկոցով աշխատող փոշեկուլ» նշանակում է մարտկոցով աշխատող փոշեկուլ, որն ամբողջությամբ լիցքավորվելու դեպքում կարող է առանց վերալիցքավորման մաքրել 15մ² մակերեսով հատակ՝ հատակի յուրաքանչյուր հատվածի վրա երկու կրկնակի շարժում կիրառելով.
- 15) «ջրային ֆիլտրով փոշեկուլ» նշանակում է չոր մաքրման փոշեկուլ, որն օգտագործում է ավելի, քան 0,5 լիտր ջուր՝ որպես ֆիլտրման հիմնական միջոց, որով ներծծվող օդն արտամղվում է ջրի միջով՝ այնտեղով անցնելիս պահելով հեռացված չոր նյութը.
- 16) «կենցաղային փոշեկուլ» նշանակում է կենցաղային կամ տնային պայմաններում օգտագործման համար նախատեսված փոշեկուլ, որն արտադրողի կողմից հայտարարվել է որպես այդպիսին Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 2006/95/ԵՄ հրահանգին առնչվող իր Համապատասխանության հայտարարագրում¹.
- 17) «ընդհանուր նշանակության փոշեկուլ» նշանակում է փոշեկուլ՝ համալրված ֆիքսված կամ առնվազն մեկ հանովի ծայրափողակով թե՛ գորգեր եւ թե՛ կոշտ հատակներ մաքրելու համար, կամ համալրված երկուսով էլ՝ առնվազն մեկ հանովի ծայրափողակով՝ նախատեսված գորգեր մաքրելու համար, եւ առնվազն մեկ հանովի ծայրափողակով՝ կոշտ հատակները մաքրելու համար.
- 18) «կոշտ հատակի փոշեկուլ» նշանակում է փոշեկուլ՝ համալրված հատուկ կոշտ հատակների մաքրման համար նախատեսված ֆիքսված ծայրափողակով կամ համալրված հատուկ կոշտ հատակների մաքրման համար նախատեսված միայն մեկ կամ մի քանի հանովի ծայրափողակներով.
- 19) «գորգի փոշեկուլ» նշանակում է փոշեկուլ՝ համալրված հատուկ գորգերի մաքրման համար նախատեսված ֆիքսված ծայրափողակով կամ համալրված գորգերի մաքրման համար նախատեսված միայն մեկ կամ մի քանի հանովի ծայրափողակներով.

¹ ՊՏ L 374, 27.12.2006թ., էջ 10:

- 20) «համարժեք փոշեկուլ» նշանակում է փոշեկուլի շուկայահանված մոդել՝ նույն մուտքային հզորությամբ, էներգիայի տարեկան սպառմամբ, գորգից եւ կոշտ հատակից փոշու հավաքմամբ, փոշու երկրորդային արտանետմամբ, ձայնի հզորության մակարդակով, ինչ նույն արտադրողի կողմից առետրային այլ ծածկագրի թվի ներքո շուկայահանված փոշեկուլի մեկ այլ մոդել:

Հոդված 3

Մատակարարների պարտականությունները եւ ժամանակացույցը

1. Մատակարարներն ապահովում են, որ 2014 թվականի սեպտեմբերի 1-ից սկսած՝
 - ա) յուրաքանչյուր փոշեկուլ համալրված լինի II հավելվածով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններ պարունակող տպագրված պիտակով.
 - բ) տրամադրվի III հավելվածով սահմանված՝ արտադրանքի տեղեկաթերթիկը.
 - գ) անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին պահանջի դեպքում տրամադրվեն IV հավելվածով սահմանված տեխնիկական փաստաթղթերը.
 - դ) փոշեկուլի կոնկրետ մոդելի ցանկացած գովազդում նշվի էներգաարդյունավետության դասը, եթե գովազդը տեղեկություններ է պարունակում էներգիայի սպառման եւ խնայողության կամ գնի վերաբերյալ.
 - ե) փոշեկուլի կոնկրետ մոդելի վերաբերյալ ցանկացած տեխնիկական գովազդային նյութ, որը նկարագրում է դրա որոշ տեխնիկական պարամետրերը, ներառի այդ մոդելի էներգաարդյունավետության դասը:

2. II հավելվածով սահմանված՝ պիտակի ձեւաչափը կիրառվում է համաձայն հետեւյալ ժամանակացույցի՝
- ա) 2014 թվականի սեպտեմբերի 1-ից հետո շուկայահանված փոշեկուլների պիտակները պետք է համապատասխանեն II հավելվածում բերված 1-ին պիտակին.
 - բ) 2017 թվականի սեպտեմբերի 1-ից հետո շուկայահանված փոշեկուլների պիտակները պետք է համապատասխանեն II հավելվածում բերված 2-րդ պիտակին:

Հոդված 4

Վաճառողների պարտականությունները

Վաճառողներն ապահովում են, որ 2014 թվականի սեպտեմբերի 1-ից սկսած՝

- ա) վաճառքի կետում ներկայացված յուրաքանչյուր մոդելի վրա զետեղված լինի 3-րդ հոդվածին համապատասխան մատակարարների կողմից տրամադրված պիտակը՝ փակցված սարքի արտաքին կողմի վրա կամ կախված սարքից այնպես, որ այն հստակ տեսանելի լինի.
- բ) թիվ 2010/30/ԵՄ հրահանգի 7-րդ հոդվածով սահմանված կարգով՝ վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկվող փոշեկուլները, որոնց դեպքում չի կարող ակնկալվել, որ վերջնական սպառողը կտեսնի ցուցադրված արտադրատեսակը, շուկայահանվեն մատակարարների կողմից՝ սույն կանոնակարգի V հավելվածին համապատասխան տրամադրված տեղեկություններով.
- գ) փոշեկուլի կոնկրետ մոդելի ցանկացած գովազդում, որը տեղեկություններ է պարունակում էներգիայի սպառման եւ խնայողության կամ գնի վերաբերյալ, նշում կատարվի էներգաարդյունավետության դասի վերաբերյալ.

դ) փոշեկուլի կոնկրետ մոդելի վերաբերյալ ցանկացած տեխնիկական գովազդային նյութ, որը նկարագրում է դրա որոշ տեխնիկական պարամետրերը, տեղեկություններ պարունակի այդ մոդելի էներգաարդյունավետության դասի վերաբերյալ:

Հոդված 5

Չափման մեթոդները

3-րդ և 4-րդ հոդվածների համաձայն տրամադրվելիք տեղեկություններն ստացվում են հուսալի, ճշգրիտ և վերարտադրելի չափման և հաշվարկման մեթոդներով, երբ հաշվի են առնվում VI հավելվածով սահմանված՝ համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման և հաշվարկման մեթոդները:

Հոդված 6

Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող ստուգման ընթացակարգը

Էներգաարդյունավետության հայտարարված դասի, մաքրման ֆունկցիայի դասերի, փոշու երկրորդային արտանետման դասի, էներգիայի տարեկան սպառման և ձայնի հզորության մակարդակի համապատասխանությունը գնահատելիս անդամ պետությունները կիրառում են VII հավելվածով սահմանված ընթացակարգը:

Հոդված 7

Վերանայումը

Հանձնաժողովը վերանայում է սույն կանոնակարգը տեխնոլոգիական առաջընթացի լույսի ներքո ոչ ուշ, քան այն ուժի մեջ մտնելուց հետո հինգ տարվա ընթացքում: Վերանայմամբ գնահատվում է, մասնավորապես, VII հավելվածով սահմանված ստուգման ընթացքում թույլատրելի շեղումները, թե արդյոք

ամբողջությամբ մարտկոցով աշխատող փոշեկուլները պետք է ընդգրկվեն գործողության ոլորտում, եւ թե արդյոք հնարավոր է էներգիայի տարեկան սպառման, փոշու հավաքման եւ փոշու երկրորդային արտանետման դեպքում կիրառել այն չափման մեթոդները, որոնց համար հիմք է ընդունվում ոչ թե դատարկ, այլ մասամբ լցված հավաքարանը:

Հոդված 8

Անցումային դրույթը

Սույն կանոնակարգը կիրառվում է ջրային ֆիլտրով փոշեկուլների նկատմամբ՝ սկսած 2017 թվականի սեպտեմբերի 1-ից:

Հոդված 9

Ուժի մեջ մտնելը

Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* դրա հրապարակմանը հաջորդող քսաներորդ օրը:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր եւ անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2013 թվականի մայիսի 3-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Նախագահ

Ժոզե Մանուել ԲԱՂՈՋՈՒ

ՀԱՎԵԼՎԱԾ I

Էներգաարդյունավետության, մաքրման ֆունկցիայի եւ փոշու երկրորդային արտանետման դասերը

1. Էներգաարդյունավետության դասերը

Փոշեկուլի էներգաարդյունավետության դասը որոշվում է 1-ին աղյուսակով սահմանված՝ դրա էներգիայի տարեկան սպառմանը համապատասխան: Փոշեկուլի էներգիայի տարեկան սպառումը որոշվում է VI հավելվածին համապատասխան:

Աղյուսակ 1

Էներգաարդյունավետության դասերը

| Էներգաարդյունավետության դասը | Էներգիայի տարեկան սպառում (ԷՏ) [կՎտժ/տ] | |
|------------------------------|---|--------------------------|
| | Պիտակ 1 | Պիտակ 2 |
| A+++ | տ/չ | $ԷՏ \leq 10,0$ |
| A++ | տ/չ | $10,0 \leq ԷՏ \leq 16,0$ |
| A+ | տ/չ | $16,0 < ԷՏ \leq 22,0$ |
| A | $ԷՏ \leq 28,0$ | $22,0 < ԷՏ \leq 28,0$ |
| B | $28,0 < ԷՏ \leq 34,0$ | $28,0 < ԷՏ \leq 34,0$ |
| C | $34,0 < ԷՏ < 40,0$ | $34,0 < ԷՏ \leq 40,0$ |
| D | $40,0 < ԷՏ \leq 46,0$ | $ԷՏ > 40,0$ |
| E | $46,0 < ԷՏ \leq 52,0$ | տ/չ |
| F | $52,0 < ԷՏ \leq 58,0$ | տ/չ |
| G | $ԷՏ > 58,0$ | տ/չ |

2. Մաքրման ֆունկցիայի դասերը

Փոշեկուլի մաքրման ֆունկցիայի դասը որոշվում է 2-րդ աղյուսակով սահմանված՝ դրա փոշու հավաքման ֆունկցիային (փհ) համապատասխան: Փոշեկուլի փոշու հավաքման ֆունկցիան որոշվում է VI հավելվածին համապատասխան:

Աղյուսակ 2

Մաքրման ֆունկցիայի դասերը

| Մաքրման ֆունկցիայի դասը | Փոշու հավաքում գորգից (ψh_q) | Փոշու հավաքում կոշտ հատակից (ψh_{yh}) |
|-------------------------|--------------------------------------|---|
| A | $\psi h_q \geq 0,91$ | $\psi h_{yh} \geq 1,11$ |
| B | $0,87 \leq \psi h_q < 0,91$ | $1,08 \leq \psi h_{yh} < 1,11$ |
| C | $0,83 \leq \psi h_q < 0,87$ | $1,05 \leq \psi h_{yh} < 1,08$ |
| D | $0,79 \leq \psi h_q < 0,83$ | $1,02 \leq \psi h_{yh} < 1,05$ |
| E | $0,75 \leq \psi h_q < 0,79$ | $0,99 \leq \psi h_{yh} < 1,02$ |
| F | $0,71 \leq \psi h_q < 0,75$ | $0,96 \leq \psi h_{yh} < 0,99$ |
| G | $\psi h_q < 0,71$ | $\psi h_{yh} < 0,96$ |

3. Փոշու երկրորդային արտանետումը

Փոշեկուլի՝ փոշու երկրորդային արտանետման դասը որոշվում է 3-րդ աղյուսակով սահմանված՝ դրա փոշու երկրորդային արտանետման ֆունկցիային համապատասխան: Փոշեկուլի՝ փոշու երկրորդային արտանետման ֆունկցիան որոշվում է VI հավելվածին համապատասխան:

Աղյուսակ 3

Փոշու երկրորդային արտանետման դասերը

| Փոշու երկրորդային արտանետման դասը | Փոշու երկրորդային արտանետում ($\psi_{եա}$) |
|-----------------------------------|--|
| A | $\psi_{եա} \leq 0,02 \%$ |
| B | $0,02 \% < \psi_{եա} \leq 0,08 \%$ |
| C | $0,08 \% < \psi_{եա} \leq 0,20 \%$ |
| D | $0,20 \% < \psi_{եա} \leq 0,35 \%$ |
| E | $0,35 \% < \psi_{եա} \leq 0,60 \%$ |
| F | $0,60 \% < \psi_{եա} \leq 1,00 \%$ |
| G | $\psi_{եա} > 1,00 \%$ |


ՀԱՎԵԼՎԱԾ II

Պիտակը

1. Պիտակ 1

1.1. Ընդհանուր նշանակության փոշեկուլներ

Պիտակը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները՝




- I. մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
- II. մատակարարի մոդելի նույնականացուցիչը, որտեղ «մոդելի նույնականացուցիչը» այն ծածկագիրն է՝ սովորաբար տառաթվային, որով տարբերակվում է փոշեկուլի կոնկրետ մոդելը նույն ապրանքային նշանով կամ մատակարարի անվանմամբ այլ մոդելներից.
- III. I հավելվածով սահմանված՝ էներգաարդյունավետության դասը. փոշեկուլի էներգաարդյունավետության դասը պարունակող սլաքի ծայրը պետք է զետեղված լինի նույն բարձրության վրա, ինչ համապատասխան էներգաարդյունավետության դասի սլաքի ծայրը.
- IV. VI հավելվածով սահմանված՝ էներգիայի միջին տարեկան սպառումը.
- V. I հավելվածով սահմանված՝ փոշու երկրորդային արտանետման դասը.
- VI. I հավելվածով սահմանված՝ գորգի մաքրման ֆունկցիայի դասը.
- VII. I հավելվածով սահմանված՝ կոշտ հատակի մաքրման ֆունկցիայի դասը.
- VIII. VI հավելվածով սահմանված՝ ձայնի հզորության մակարդակը:

Պիտակների ձեւը պետք է համապատասխանի սույն հավելվածի 4.1 կետին: Շեղում կատարելով, եթե Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 66/2010 կանոնակարգի (ԵՄ) համաձայն¹ մոդելին շնորհվել է «ԵՄ էկոպիտակ», ապա կարող է ավելացվել ԵՄ էկոպիտակի պատճենը:

¹ ՊՏ L 27, 30.01.2010թ., էջ 1:

1.2. Կոշտ հատակի փոշեկուլներ



Պիտակը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները՝

- I. մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
- II. մատակարարի մոդելի նույնականացուցիչը, որտեղ «մոդելի նույնականացուցիչը» այն ծածկագիրն է՝ սովորաբար տառաթվային,

որով տարբերակվում է փոշեկուլի կոնկրետ մոդելը նույն ապրանքային նշանով կամ մատակարարի անվանմամբ այլ մոդելներից.

III. I հավելվածով սահմանված՝ էներգաարդյունավետության դասը. փոշեկուլի էներգաարդյունավետության դասը պարունակող սլաքի ծայրը պետք է զետեղված լինի նույն բարձրության վրա, ինչ համապատասխան էներգաարդյունավետության դասի սլաքի ծայրը.

IV. VI հավելվածով սահմանված՝ էներգիայի տարեկան սպառումը.

V. I հավելվածով սահմանված՝ փոշու երկրորդային արտանետման դասը.


VI. բացառման նշանը.

VII. I հավելվածով սահմանված՝ կոշտ հատակի մաքրման ֆունկցիայի դասը.

VIII. VI հավելվածով սահմանված ձայնի հզորության մակարդակը:

Պիտակների ձեւը պետք է համապատասխանի սույն հավելվածի 4.2 կետին: Շեղում կատարելով, եթե Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 66/2010 (ԵՄ) կանոնակարգի համաձայն մոդելին շնորհվել է «ԵՄ էկոպիտակ», ապա կարող է ավելացվել ԵՄ էկոպիտակի պատճենը:

1.3. Գորգի փոշեկուլներ



Պիտակը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները՝


- I. մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
- II. մատակարարի մոդելի նույնականացուցիչը, որտեղ «մոդելի նույնականացուցիչը» այն ծածկագիրն է՝ սովորաբար տառաթվային, որով տարբերակվում է փոշեկուլի կոնկրետ մոդելը նույն ապրանքային նշանով կամ մատակարարի անվանմամբ այլ մոդելներից.

- III. I հավելվածով սահմանված՝ էներգաարդյունավետության դասը. փոշեկուլի էներգաարդյունավետության դասը պարունակող սլաքի ծայրը պետք է զետեղված լինի նույն բարձրության վրա, ինչ համապատասխան էներգաարդյունավետության դասի սլաքի ծայրը.
- IV. VI հավելվածով սահմանված՝ էներգիայի միջին տարեկան սպառումը.
- V. I հավելվածով սահմանված՝ փոշու երկրորդային արտանետման դասը.
- VI. I հավելվածով սահմանված՝ գորգի մաքրման ֆունկցիայի դասը.
- VII. բացառման նշանը.
- VIII. VI հավելվածով սահմանված՝ ձայնի հզորության մակարդակը:

Պիտակների ձեւը պետք է համապատասխանի սույն հավելվածի 4.3 կետին: Շեղում կատարելով, եթե Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 66/2010 (ԵՄ) կանոնակարգի համաձայն մոդելին շնորհվել է «ԵՄ էկոպիտակ», ապա կարող է ավելացվել ԵՄ էկոպիտակի պատճենը:

2. ՊԻՏԱԿ 2


2.1. Ընդհանուր նշանակության փոշեկուլներ



Այս պիտակը պետք է ներառի 1.1 կետում նշված տեղեկությունները.

Պիտակների ձևը պետք է համապատասխանի սույն հավելվածի 4.1 կետին: Շեղում կատարելով, եթե Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 66/2010 (ԵՄ) կանոնակարգի համաձայն մոդելին շնորհվել է «ԵՄ էկոպիտակ», ապա կարող է ավելացվել ԵՄ էկոպիտակի պատճենը:


2.2. Կոշտ հատակի փոշեկուլներ



Այս պիտակը պետք է ներառի 1.2 կետում նշված տեղեկությունները.

Պիտակների ձևը պետք է համապատասխանի սույն հավելվածի 4.2 կետին: Շեղում կատարելով, եթե Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 66/2010 (ԵՄ) կանոնակարգի համաձայն մոդելին շնորհվել է «ԵՄ էկոպիտակ», ապա կարող է ավելացվել ԵՄ էկոպիտակի պատճենը:

2.3. Գորգի փոշեկուլներ




Այս պիտակը պետք է ներառի 1.3 կետում նշված տեղեկությունները.

Պիտակների ձեռք պետք է համապատասխանի սույն հավելվածի 4.3 կետին: Շեղում կատարելով, եթե Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 66/2010 (ԵՄ) կանոնակարգի համաձայն մոդելին շնորհվել է «ԵՄ էկոպիտակ», ապա կարող է ավելացվել ԵՄ էկոպիտակի պատճենը:

3. ՊԻՏԱԿԻ ՁԵՎԸ

3.1. Ընդհանուր նշանակության փոշեկուլների պիտակները պետք է ունենան հետևյալ ձևը՝



որտեղ՝

ա) պիտակը պետք է ունենա առնվազն 75 մմ լայնություն եւ 150 մմ բարձրություն: Եթե պիտակը տպագրվում է ավելի մեծ ձեւաչափով, ապա դրա բովանդակությունը, պետք է, այնուամենայնիվ, համամասն լինի վերը նշված նկարագրերին.

բ) ֆոնը պետք է լինի սպիտակ.

գ) գույները պետք է ունենան ԿԿԴՍ ծածկագիրը՝ կապտականաչ, կարմրամանուշակագույն, դեղին, սեւ՝ հետեւյալ օրինակի համաձայն՝ 00-70-X-00, օր.՝ 0 % կապտականաչ, 70 % կարմրամանուշակագույն, 100 % դեղին, 0 % սեւ.

դ) պիտակը պետք է բավարարի բոլոր հետեւյալ պահանջները (թվերը վերաբերում են վերոնշյալ պատկերին)՝

1. **ԵՄ պիտակի սահմանագծերը՝** 3,5 կետ, գույնը՝ կապտականաչ 100 %, կլոր անկյուններ՝ 2,5 մմ:

2. **ԵՄ պատկերանիշ՝** գույները՝ X-80-00-00 եւ 00-00-X-00:

3. **Էներգիայի պատկերանիշ՝** գույնը՝ X-00-00-00: Ներկայացված գրաֆիկական պատկերը՝ ԵՄ պատկերանիշ + Էներգիայի պատկերանիշ, լայնությունը՝ 62 մմ, բարձրությունը՝ 12 մմ:

4. **Պատկերանիշի տակ գտնվող եզրագիծը՝** 1 կետ, գույնը՝ կապտականաչ 100 %, երկարություն՝ 62 մմ:

5. **A-G եւ A+++-D սանդղակները՝**

— **սլաքը՝** բարձրությունը՝ 6 մմ, բացատը՝ 1 մմ, գույները՝

ամենաբարձր դասը՝ X-00-X-00,

երկրորդ դասը՝ 70-00-X-00,

երրորդ դասը՝ 30-00-X-00,

չորրորդ դասը՝ 00-00-X-00,

հինգերորդ դասը՝ 00-30-X-00,

վեցերորդ դասը՝ 00-70-X-00,

վերջին դասը՝ 00-X-X-00.

- **տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 13 կետ, մեծատառեր, սպիտակ:

6. Էներգաարդյունավետության դասը

- **սլաքը՝** լայնությունը՝ 17 մմ, բարձրությունը՝ 9 մմ, 100% սեւ.
- **տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 18.5 կետ, մեծատառեր, սպիտակ. «+» պայմանանշաններ, «Կալիբրի» տառատեսակ, թավ 11 կետ, սպիտակ, գտնվում են մեկ շարքի վրա:

7. Էներգիա

- **տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 6 կետ, մեծատառեր, սեւ:

8. Էներգիայի տարեկան սպառումը՝ արտահայտված կՎտժ/տարի-ով՝

- **արժեքը «YZ»՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 20 կետ, 100 % սեւ.
- **«կՎտժ/տարի»՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 12 կետ, 100 % սեւ:

9. Մաքրման ֆունկցիան գորգի վրա՝

- **սահմանը՝** 1,5 կետ, գույնը՝ կապտականաչ 100 %, կլոր անկյուններ՝ 2,5 մմ

- **տառերը՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 13,5 կետ, 100 % սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, թավ 18 կետ, 100 % սեւ:

10. Մաքրման ֆունկցիան կոշտ հատակի վրա՝

- **եզրագիծը՝** 1,5 կետ, գույնը՝ կապտականաչ 100 %, կլոր անկյուններ՝ 2,5 մմ
- **տառերը՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 13,5 կետ, 100 % սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, թավ 18 կետ, 100 % սեւ:

11. Փոշու երկրորդային արտանետումը

- **եզրագիծը՝** 1,5 կետ, գույնը՝ կապտականաչ 100 %, կլոր անկյուններ՝ 2,5 մմ
- **տառերը՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 13,5 կետ, 100 % սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, թավ 18 կետ, 100 % սեւ:

12. Ձայնի հզորության մակարդակը

- **եզրագիծը՝** 1,5 կետ, գույնը՝ կապտականաչ 100 %, կլոր անկյուններ՝ 2,5 մմ
- **արժեքը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 16 կետ, 100 % սեւ.
- **«դԲ»՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 11 կետ, 100 % սեւ:

13. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը


14. Մատակարարի մոդելի նույնականացուցիչը

- 15.** Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը եւ մոդելի նույնականացուցիչը պետք է տեղավորվեն 62 x 10 մմ տարածության մեջ:

16. Կանոնակարգի եւ պիտակի համարակալումը

— տեքստը՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ 8:

3.2. Կոշտ հատակի փոշեկուլների պիտակները պետք է ունենան հետևյալ ձևը՝




որտեղ՝

Պիտակի ձևի նկարագրությունը պետք է համապատասխանի սույն հավելվածի 4.1 կետին՝ բացառությամբ 9-րդ կետի, որտեղ կիրառվում է հետևյալը՝

9. Մաքրման ֆունկցիան գորգի վրա՝

- բացառման նշանը. եզրագիծը 3 կետ, գույնը՝ 00-X-X-00 (100 % կարմիր), տրամաչափը՝ 16 մմ:

3.3. Գորգի փոշեկուլների պիտակները պետք է ունենան հետևյալ ձևը՝



որտեղ՝

Պիտակի ձեւի նկարագրությունը պետք է համապատասխանի սույն հավելվածի 4.1 կետին՝ բացառությամբ 10-րդ կետի, որտեղ կիրառվում է հետեւյալը՝

10. Մաքրման ֆունկցիան կոշտ հատակի վրա՝

- **բացառման նշանը.** եզրագիծը 3 կետ, գույնը՝ 00-X-X-00 (100 % կարմիր), տրամաչափը՝ 16 մմ:

*ՀԱՎԵԼՎԱԾ III***Տեղեկաթերթիկը**

1. Փոշեկուլի՝ արտադրանքի վերաբերյալ տեղեկաթերթիկում զետեղված տեղեկությունները պետք է ներկայացված լինեն հետևյալ հերթականությամբ եւ ներառված լինեն արտադրանքի բրոշյուրի կամ արտադրանքի հետ տրամադրվող այլ գրականության մեջ.
 - ա) մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
 - բ) մատակարարի մոդելի նույնականացուցիչը, որտեղ «մոդելի նույնականացուցիչը» այն ծածկագիրն է՝ սովորաբար տառաթվային, որով տարբերակվում է փոշեկուլի կոնկրետ մոդելը նույն ապրանքային նշանով կամ մատակարարի անվանմամբ այլ մոդելներից.
 - գ) I հավելվածով սահմանված՝ էներգաարդյունավետության դասը.
 - դ) էներգիայի տարեկան սպառումը՝ արտահայտված կՎտժ/տարի-ով՝ կլորացնելով մինչեւ մեկ տասնորդական, ինչպես սահմանված է VI հավելվածով. այն նկարագրվում է որպես «էներգիայի տարեկան ինդիկատիվ սպառում (կՎտժ տարեկան կտրվածքով)՝ 50 մաքրման ծրագրերի հիման վրա: Էներգիայի տարեկան փաստացի սպառումը պայմանավորված կլինի սարքի օգտագործման եղանակով».
 - ե) ընդհանուր նշանակության փոշեկուլների եւ գորգի փոշեկուլների դեպքում I հավելվածով սահմանված՝ գորգի մաքրման ֆունկցիայի դասը: Կոշտ հատակի փոշեկուլների դեպքում կատարվում է հետևյալ նշումը՝ «հարմար չէ գորգերի մաքրման համար՝ մատակարարված ծայրափողակով».
 - զ) ընդհանուր նշանակության փոշեկուլների եւ կոշտ հատակի փոշեկուլների դեպքում I հավելվածով սահմանված՝ կոշտ հատակի

մաքրման ֆունկցիայի դասը: Գորգի փոշեկուլների դեպքում կատարվում է հետեւյալ նշումը՝ «հարմար չէ կոշտ հատակի մաքրման համար՝ մատակարարված ծայրափողակով».

- է) I հավելվածով սահմանված՝ փոշու երկրորդային արտանետման դասը.
- ը) VI հավելվածով սահմանված՝ ձայնի հզորության մակարդակը.
- թ) VI հավելվածով սահմանված՝ հաշվարկային սպառվող հզորությունը.
- ժ) եթե թիվ 66/2010 կանոնակարգի (ԵՄ) համաձայն փոշեկուլին տրվել է «ԵՄ էկոպիտակ», ապա այս տեղեկությունները կարող են ներառվել:

2. Մեկ տեղեկաթերթիկով կարող են ներկայացվել նույն մատակարարի կողմից մատակարարված մի քանի փոշեկուլի մոդելների վերաբերյալ տեղեկություններ:

3. Տեղեկաթերթիկում պարունակվող տեղեկությունները կարող են ներկայացվել պիտակի պատճենի ձեւով՝ գունավոր կամ սեւ ու սպիտակ: Այս դեպքում 1-ին կետում նշված տեղեկությունները, որոնք դեռեւս չեն զետեղվել պիտակի վրա, նույնպես տրամադրվում են:

*ՀԱՎԵԼՎԱԾ IV***Տեխնիկական փաստաթղթերը**

1. 3-րդ հոդվածում նշված տեխնիկական փաստաթղթերը ներառում են՝
 - ա) մատակարարի անվանումը եւ հասցեն.
 - բ) փոշեկուլի տեսակի եւ (կամ) մոդելի ընդհանուր նկարագիրը եւ (կամ) առետրային ծածկագիրը, որոնք բավարար են այն անվերապահորեն ու հեշտությամբ նույնականացնելու համար.
 - գ) անհրաժեշտության դեպքում՝ կիրառված ներդաշնակեցված ստանդարտների հղումները.
 - դ) անհրաժեշտության դեպքում՝ օգտագործված մյուս տեխնիկական ստանդարտները եւ մասնագրերը.
 - ե) մատակարարի համար պարտավորություններ սահմանելու լիազորություն ունեցող անձի նույնականացման տվյալները եւ ստորագրությունը.
 - զ) VI հավելվածին համապատասխան չափված եւ հաշվարկված տեխնիկական պարամետրերը՝
 - i) գորգի վրա անցկացվող փորձարկման ժամանակ էներգիայի կոնկրետ սպառումը՝ անհրաժեշտության դեպքում.
 - ii) կոշտ հատակի վրա անցկացվող փորձարկման ժամանակ էներգիայի կոնկրետ սպառումը՝ անհրաժեշտության դեպքում.
 - iii) փոշու հավաքումը գորգից եւ կոշտ հատակից՝ անհրաժեշտության դեպքում,
 - iv) փոշու երկրորդային արտանետումը.

- v) ձայնի հզորության մակարդակը.
 - vi) հաշվարկային սպառվող հզորությունը.
 - vii) VI հավելվածի 3-րդ եւ 4-րդ կետերում նշված հատուկ արժեքները՝ անհրաժեշտության դեպքում.
- է) VI հավելվածին համապատասխան կատարված հաշվարկների արդյունքները:
2. Եթե փոշեկուլի կոնկրետ մոդելի տեխնիկական փաստաթղթերի փաթեթում ներառված տեղեկություններն ստացվել են համարժեք փոշեկուլի հիման վրա կատարված հաշվարկի արդյունքում, ապա տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն այդ հաշվարկների, ինչպես նաեւ կատարված հաշվարկների ճշգրտությունն ստուգելու համար արտադրողների կողմից կատարված փորձարկումների մանրամասները: Տեխնիկական տեղեկությունները պետք է ներառեն նաեւ փոշեկուլների բոլոր այն համարժեք մոդելների ցանկը, որոնց առնչվող տեղեկություններն ստացվել են նույն եղանակով:
3. Նշված տեխնիկական փաստաթղթերում ներառված տեղեկությունները կարող են համակցվել թիվ 2009/125/ԵՄ հրահանգի համաձայն սահմանված միջոցներին համապատասխան տրամադրված տեխնիկական փաստաթղթերի հետ:
-

*ՀԱՎԵԼՎԱԾ V***Տրամադրվելիք տեղեկություններն այն դեպքերում, երբ վերջնական սպառողները չեն կարող տեսնել ցուցադրված արտադրանքը**

1. 4(բ) հոդվածում նշված տեղեկությունները տրամադրվում են հետևյալ կերպ՝
 - ա) I հավելվածով սահմանված՝ էներգաարդյունավետության դասը.
 - բ) VI հավելվածով սահմանված՝ էներգիայի տարեկան սպառումը.
 - գ) ընդհանուր նշանակության փոշեկուլների եւ գորգի փոշեկուլների դեպքում I հավելվածով սահմանված՝ գորգի մաքրման ֆունկցիայի դասը: Կոշտ հատակի փոշեկուլների դեպքում կատարվում է հետևյալ նշումը՝ «հարմար չէ գորգերի մաքրման համար».
 - դ) ընդհանուր նշանակության փոշեկուլների եւ կոշտ հատակի փոշեկուլների դեպքում I հավելվածով սահմանված՝ հատակի մաքրման ֆունկցիայի դասը: Գորգի փոշեկուլների դեպքում կատարվում է հետևյալ նշումը՝ «հարմար չէ կոշտ հատակի մաքրման համար».
 - ե) I հավելվածով սահմանված՝ փոշու երկրորդային արտանետման դասը.
 - զ) VI հավելվածով սահմանված՝ ձայնի հզորության մակարդակը:
 2. Եթե տրամադրվում են նաեւ արտադրանքի տեղեկաթերթիկում պարունակվող այլ տեղեկություններ, ապա դրանք պետք է տրամադրվեն III հավելվածով սահմանված ձևով եւ կարգով:
 3. Սույն հավելվածում նշված տեղեկությունները տպագրվում կամ ցուցադրվում են ընթերցանելի տառաչափով եւ տառատեսակով:
-

*ՀԱՎԵԼՎԱԾ VI***Չափման եւ հաշվարկման մեթոդները**

1. Սույն կանոնակարգի պահանջներին համապատասխանության եւ այդ համապատասխանության ստուգման նպատակներով պետք է իրականացվեն չափումներ եւ հաշվարկներ այնպիսի հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի մեթոդների կիրառմամբ, երբ հաշվի են առնվում համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման եւ հաշվարկման մեթոդները, այդ թվում՝ ներդաշնակեցված ստանդարտները, որոնց գրանցման համարներն այդ նպատակով հրապարակվել են *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում*: Դրանք պետք է համապատասխանեն սույն հավելվածով սահմանված տեխնիկական սահմանումներին, պայմաններին, հավասարումներին եւ պարամետրերին:

2. Տեխնիկական սահմանումները

ա) «կոշտ հատակի մաքրման փորձարկում» նշանակում է երկու մաքրման ցիկլերից կազմված փորձարկում, որի ընթացքում առավելագույն քաշող հզորությամբ աշխատող փոշեկուլի մաքրող գլխիկն անցնում է մաքրման գլխիկի լայնությանը հավասար եւ համապատասխան երկարությամբ փայտյա թիթեղներից կազմված փորձարկման տարածքի վրայով՝ անկյունագծով (45°) տեղադրված փորձարկման ճեղքի վրայով, որտեղ ժամանակը լրանալուց հետո էլեկտրաէներգիայի սպառումը եւ մաքրման գլխիկի կենտրոնական մասի հարաբերական դիրքը փորձարկման տարածքի նկատմամբ շարունակաբար չափվում եւ արձանագրվում են համապատասխան նմուշային հաճախականությամբ, եւ որտեղ մաքրման յուրաքանչյուր ցիկլի վերջում համապատասխանաբար գնահատվում է փորձարկման ճեղքի զանգվածի նվազումը.

- բ) «փորձարկման ճեղք» նշանակում է համապատասխան չափսերի U-աձեւ շարժական ներդիր, որը մաքրման ցիկլի սկզբում լցվում է համապատասխան արհեստական փոշով.
- գ) «գորգի մաքրման փորձարկում» նշանակում է Ուիլտոն գորգի փորձասարքի վրա մաքրման համապատասխան թվով ցիկլերի փորձարկում, որի ընթացքում առավելագույն քաշող հզորությամբ աշխատող փոշեկուլի մաքրող գլխիկն անցնում է մաքրման գլխիկի լայնությանը հավասար եւ համապատասխան երկարությամբ փորձարկման տարածքի վրայով, որը կեղտոտված է հավասարապես բաշխված ու համապատասխան կերպով պատված՝ համապատասխան կազմությամբ փորձարկման փոշով, որտեղ ժամանակը լրանալուց հետո էլեկտրաէներգիայի սպառումը եւ մաքրման գլխիկի կենտրոնական մասի հարաբերական դիրքը փորձարկման տարածքի նկատմամբ շարունակաբար չափվում եւ արձանագրվում են համապատասխան նմուշային հաճախականությամբ, եւ մաքրման յուրաքանչյուր ցիկլի վերջում համապատասխանաբար գնահատվում է սարքի փոշեհավաքարանի զանգվածի ավելացումը.
- դ) «մաքրող գլխիկի լայնություն»՝ արտահայտված մ-ով, երեք տասնորդական նիշերի ճշգրտությամբ, նշանակում է մաքրող գլխիկի արտաքին առավելագույն լայնությունը.
- ե) «մաքրման ցիկլ» նշանակում է փոշեկուլի հինգ կրկնակի շարժումների հաջորդականություն հատակին՝ հատուկ փորձարկման տարածքի վրա («գորգ» կամ «կոշտ հատակ»).
- զ) «կրկնակի շարժում» նշանակում է մաքրող գլխիկի մեկ դեպի առջեւ եւ մեկ դեպի հետ շարժում զուգահեռ մոդելով, որը կատարվում է շարժման արագության փորձարկման միանման պայմաններում եւ փորձարկվող շարժման սահմանված տեւողությամբ.

- է) «փորձարկվող շարժման արագություն»՝ արտահայտված մ/ժ-ով, նշանակում է մաքրող գլխիկի՝ փորձարկմանը համապատասխան արագությունը, որը նախընտրելի է իրականացնել էլեկտրամեխանիկական օպերատորով: Ինքնագնաց մաքրող գլխիկներով արտադրատեսակները պետք է հնարավորինս մոտեցվեն համապատասխան արագությանը, սակայն տեխնիկական փաստաթղթերում այդ մասին հստակ նշված լինելու դեպքում թույլատրելի է որոշակի շեղում:
- ը) «փորձարկման շարժման երկարություն»՝ արտահայտված մետրերով, նշանակում է փորձարկման տարածքի երկարությանը գումարած փորձարկման տարածքից առաջ եւ հետո արագացման համապատասխան հատվածների վրայով շարժվելիս մաքրող գլխիկի կենտրոնական մասի անցած հեռավորությունը:
- թ) «փոշու հավաքում (փ_n)»՝ երեք տասնորդական նիշերի ճշգրտությամբ, նշանակում է մաքրող գլխիկի մի քանի կրկնակի շարժումից հետո հեռացված արհեստական փոշու զանգվածի, որը գորգի համար որոշվում է սարքի փոշեհավաքարանի զանգվածն ավելացնելու միջոցով, իսկ կոշտ հատակի համար՝ զանգվածը պակասեցնելու միջոցով, եւ փորձարկման տարածքի վրա ի սկզբանե քսված արհեստական փոշու զանգվածի միջեւ հարաբերակցությունը՝ փորձարկումների կոնկրետ պայմաններին հարմարեցված գորգի համար եւ փորձարկման ճեղքի երկարությանն ու դիրքին հարմարեցված կոշտ հատակի համար:
- ժ) «փոշեկուլի էտալոնային համակարգ» նշանակում է էլեկտրականությամբ աշխատող լաբորատոր սարքավորում, որն օգտագործվում է օդի հետ կապված սահմանված պարամետրերով գորգերից տրամաչափված եւ նմուշային փոշու հավաքումը չափելու համար՝ փորձարկման արդյունքների վերարտադրելիությունը բարելավելու նպատակով:

- ժա) «հաշվարկային սպառվող հզորություն»՝ արտահայտված Վտ-ով, նշանակում է արտադրողի կողմից հայտարարված սպառվող էլեկտրական հզորություն, որով վակուումային մաքրումից բացի այլ նպատակների համար գործելու հնարավորություն ունեցող էլեկտրական սարքերի նկատմամբ կիրառվում է միայն վակուումային մաքրմանը համապատասխան սպառվող էլեկտրական հզորությունը.
- ժբ) «փոշու երկրորդային արտանետում» նշանակում է երկու տասնորդական նիշերի ճշգրտությամբ արտահայտված տոկոսային արտահայտությամբ հարաբերակցություն փոշեկուլից արտանետված՝ փոշու 0,3-10 մկմ չափի բոլոր մասնիկների քանակի եւ աշխատելիս ներծծող անցքով փոշեկուլ մտնող՝ փոշու նույն չափի բոլոր մասնիկների քանակի միջեւ: Այդ արժեքը ներառում է ոչ միայն փոշեկուլի ելքային հատվածից, այլեւ այլ տեղերից՝ արտահոսքերից արտանետվող կամ փոշեկուլի մեջ առաջացած փոշին.
- ժգ) «ծայնի հզորության մակարդակ» նշանակում է օդից առաջացող ակուստիկ աղմուկի արտանետումներ՝ արտահայտված դԲ(ա)-ի եւ 1 պՎ-ի միջեւ հարաբերակցությամբ եւ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը:

3. Էներգիայի տարեկան սպառումը

Էներգիայի տարեկան սպառումը (ԷՏ) հաշվարկվում է կՎտժ/տարի-ով եւ կլորացվում է մինչեւ մեկ տասնորդական՝ հետեւյալ կերպ.

գորգի փոշեկուլների դեպքում՝

$$ԷՏ_q = 4 \times 87 \times 50 \times 0,001 \times ԷԿՄ_q \times \left[\frac{1-0,20}{\psi h_q^{-0,20}} \right]$$

կոշտ հատակի փոշեկուլների դեպքում՝

$$E_{S_{կհ}} = 4 \times 87 \times 50 \times 0,001 \times E_{կՄ_{կհ}} \times \left[\frac{1-0,20}{\varphi_{կհ}^{-0,20}} \right]$$

ընդհանուր նշանակության փոշեկուլների դեպքում՝

$$E_{S_{ըն}} = 0,5 \times E_{S_u} + 0,5 \times E_{S_{կհ}}$$

որտեղ՝

- $E_{կՄ_q}$ -ն գորգի վրա անցկացվող փորձարկման ժամանակ էներգիայի կոնկրետ միջին սպառումն է՝ արտահայտված Վտժ/մ²-ով, որը հաշվարկվում է ստորեւ ներկայացված եղանակով.
- $E_{կՄ_{կհ}}$ -ն կոշտ հատակի վրա անցկացվող փորձարկման ժամանակ էներգիայի կոնկրետ միջին սպառումն է՝ արտահայտված Վտժ/մ²-ով, որը հաշվարկվում է ստորեւ ներկայացված եղանակով.
- $\varphi_{կհ}$ -ն փոշու հավաքումն է գորգից՝ սահմանված սույն հավելվածի 4-րդ կետին համապատասխան.
- $\varphi_{կհ}$ -ն փոշու հավաքումն է կոշտ հատակից՝ սահմանված սույն հավելվածի 4-րդ կետին համապատասխան.
- 50-ը տարվա մեջ անցկացվող մաքրման առաջադրանքների ստանդարտ քանակն է.
- 87-ը մաքրման ենթակա բնակելի ստանդարտ մակերեսն է՝ արտահայտված մ²-ով.
- 4-ը հատակի յուրաքանչյուր կետի վրայով փոշեկուլի անցնելու ստանդարտ քանակն է (երկու կրկնակի շարժում)

- 0,001-ը Վտժ-ից կՎտժ-ի փոխարկման գործոնն է.
- 1-ը փոշու ստանդարտ հավաքումն է.
- 0,20-ը փոշու հավաքումների միջեւ ստանդարտ տարբերությունն է հինգ եւ երկու կրկնակի շարժումներից հետո:

Էներգիայի կոնկրետ միջին սպառումը (ԷԿՄ)

Էներգիայի կոնկրետ միջին սպառումը գորգի փորձարկման (ԷԿՄ_գ) եւ կոշտ հատակի փորձարկման (ԷԿՄ_կ) ժամանակ սահմանվում է որպես մաքրման ցիկլերի քանակի այն կոնկրետ էներգիայի սպառման (ԿԷ) միջինը, որը կազմում է համապատասխանաբար գորգի եւ կոշտ հատակի մաքրման փորձարկումները: Էներգիայի կոնկրետ սպառման ԿԷ ընդհանուր հավասարումը՝ արտահայտված Վտժ/մ²-ով փորձարկման տարածքում՝ երեք տասնորդական նիշերի ճշգրտությամբ, որը կիրառելի է գորգի, կոշտ հատակի եւ ընդհանուր նշանակության՝ համապատասխան ինդեքսներով փոշեկուլների նկատմամբ, հետեւյալն է՝

$$ԿԷ = \frac{(\angle + \sigma\angle) \times \sigma}{U}$$

որտեղ՝

- \angle -ն միջին հզորությունն է՝ արտահայտված Վտ-ով՝ երկու տասնորդական նիշերի ճշգրտությամբ, մաքրման ցիկլի այն ժամանակահատվածում, երբ մաքրող գլխիկի կենտրոնական մասը շարժվում է փորձարկման տարածքի վրայով.
- $\sigma\angle$ -ն փոշեկուլի՝ մարտկոցներով աշխատող ակտիվ ծայրափողակի, եթե այդպիսին առկա է, միջին հզորությունն է՝ արտահայտված Վտ-ով՝ երկու տասնորդական նիշերի ճշգրտությամբ, որը հաշվարկվում է ստորեւ ներկայացված եղանակով.

- Ժ-ն մաքրման այն ցիկլի ընդհանուր ժամանակն է՝ արտահայտված ժամերով՝ չորս տասնորդական նիշերի ճշգրտությամբ, որի ընթացքում մաքրող գլխիկի կենտրոնական մասը, այսինքն՝ մաքրող գլխիկի կողային, դիմային եւ հետեւի եզրերի մեջտեղում գտնվող կետը շարժվում է փորձարկման տարածքի վրայով.
- *Մ-ն* տարածքի մակերեսն է՝ արտահայտված մ²-ով՝ երեք տասնորդական նիշերի ճշգրտությամբ, որի վրայով մաքրման ցիկլի ընթացքում անցնում է մաքրող գլխիկը, եւ որը հաշվարկված է որպես գլխիկի լայնության եւ փորձարկման տարածքի համապատասխան երկարության արտադրյալի տասնապատիկը: Եթե կենցաղային փոշեկուլն ունի 0,320 մ-ից ավելի լայնությամբ գլխիկ, ապա 0,320 մ թիվն այս հաշվարկում փոխարինվում է գլխիկի լայնությամբ:

Կոշտ հատակի վրա անցկացվող փորձարկումների դեպքում վերոնշյալ հավասարության մեջ օգտագործվում են *կհ* ինդեքսը եւ *ԿԷ_{կհ}*, *Հ_{կհ}*, *ԾՀ_{կհ}*, *Ժ_{կհ}* եւ *Մ_{կհ}* պարամետրերի անվանումները: Գորգի վրա անցկացվող փորձարկումների դեպքում վերոնշյալ հավասարության մեջ օգտագործվում են *գ* ինդեքսը եւ *ԿԷ_գ*, *Հ_գ*, *ԾՀ_գ*, *Ժ_գ* եւ *Մ_գ* պարամետրերի անվանումները: Մաքրման ցիկլերից յուրաքանչյուրի դեպքում *ԿԷ_{կհ-ի}*, *Հ_{կհ-ի}*, *ԾՀ_{կհ-ի}*, *Ժ_{կհ-ի}*, *Մ_{կհ-ի}* եւ (կամ) *ԿԷ_{գ-ի}*, *Հ_{գ-ի}*, *ԾՀ_{գ-ի}*, *Ժ_{գ-ի}*, *Մ_{գ-ի}* արժեքները կիրառելիության դեպքում ընդգրկվում են տեխնիկական փաստաթղթերում:

Մարտկոցով աշխատող ակտիվ ծայրափողակների հզորության համարժեքը (ԾՀ)

Գորգի, կոշտ հատակի եւ ընդհանուր նշանակության փոշեկուլների նկատմամբ համապատասխան ինդեքսով կիրառելի՝ մարտկոցով աշխատող ակտիվ ծայրափողակների հզորության համարժեքի (ԾՀ) ընդհանուր հավասարությունը՝ արտահայտված Վտ-ով, հետեւյալն է՝

$$\sigma_z = \frac{F}{\text{ժմարտկ}}$$

որտեղ՝

- F -ն փոշեկուլի՝ մարտկոցով աշխատող ակտիվ ծայրափողակի էլեկտրաէներգիայի սպառումն է՝ արտահայտված Վտժ-ով՝ երեք տասնորդական նիշերի ճշգրտությամբ, որն անհրաժեշտ է նախապես ամբողջությամբ լիցքավորված մարտկոցը մաքրման ցիկլից հետո դրա սկզբնական՝ ամբողջությամբ լիցքավորված վիճակին հասցնելու համար.
- *ժմարտկ*-ը մաքրման այն ցիկլի ընդհանուր ժամանակն է՝ արտահայտված ժամերով՝ չորս տասնորդական նիշերի ճշգրտությամբ, որի ընթացքում փոշեկուլի՝ մարտկոցով աշխատող ակտիվ ծայրափողակն ակտիվացված է՝ արտադրողի հրահանգներին համապատասխան.

Եթե փոշեկուլը սարքավորված չէ մարտկոցով աշխատող ակտիվ ծայրափողակով, ապա σ_z -ի արժեքը հավասար է զրոյի:

Կոշտ հատակի վրա անցկացվող փորձարկումների դեպքում վերոնշյալ հավասարության մեջ օգտագործվում են k_h ինդեքսը եւ $\sigma_{z_{k_h}}$, E_{k_h} *ժմարտկ_{k_h}* պարամետրերի անվանումները: Գորգի վրա անցկացվող փորձարկումների դեպքում վերոնշյալ հավասարության մեջ օգտագործվում են q ինդեքսը եւ σ_{z_q} , E_q *ժմարտկ_q* պարամետրերի անվանումները: Մաքրման ցիկլերից յուրաքանչյուրի դեպքում E_{k_h-h} , *ժմարտկ_{k_h-h}* եւ (կամ) E_q-h , *ժմարտկ_{q-h}*-ի արժեքները կիրառելիության դեպքում ընդգրկվում են տեխնիկական փաստաթղթերում:

4. Փոշու հավաքումը

Փոշու հավաքումը կոշտ հատակից (φh_{φ}) որոշվում է որպես կոշտ հատակի վրա անցկացվող փորձարկման մաքրման երկու ցիկլերի արդյունքների միջին:

Փոշու հավաքումը գորգից (φh_q) որոշվում է որպես գորգի վրա անցկացվող փորձարկման մաքրման երկու ցիկլերի արդյունքների միջին: Փորձարկման ենթարկվող գորգի սկզբնական հատկություններից շեղումներն ուղղելու համար գորգից փոշու հավաքումը (φh_q) հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$\varphi h_q = \varphi h_{\xi} \times \left(\frac{\varphi h_{h_{w2l}}}{\varphi h_{t_{w}}} \right)$$

որտեղ՝

- φh_{ξ} -ն փոշեկուլի՝ փոշու չափված հավաքումն է.
- $\varphi h_{h_{w2l}}$ -ն փոշեկուլի էտալոնային համակարգի՝ փոշու հավաքումն է՝ չափված փորձարկվող գորգը սկզբնական վիճակում գտնվելիս.
- $\varphi h_{t_{w}}$ -ը փոշեկուլի էտալոնային համակարգի՝ փոշու չափված հավաքումն է:

Մաքրման ցիկլերից յուրաքանչյուրի դեպքում φh_{ξ} -ի, φh_q -ի, $\varphi h_{h_{w2l}}$ -ի եւ $\varphi h_{t_{w}}$ -ի արժեքներն ընդգրկվում են տեխնիկական փաստաթղթերում:

5. Փոշու երկրորդային արտանետումը

Փոշու երկրորդային արտանետումը որոշվում է այն պահին, երբ փոշեկուլն աշխատում է օդի առավելագույն հոսքով:

6. Ձայնի հզորության մակարդակը

Ձայնի հզորության մակարդակը որոշվում է գորգի վրա:

7. Հիբրիդային փոշեկուլները

Հիբրիդային փոշեկուլների դեպքում բոլոր չափումները կատարվում են միայն էլեկտրական ցանցից սնվող փոշեկուլով եւ ցանկացած մարտկոցով աշխատող ակտիվ ծայրափողակով:

*ՀԱՎԵԼՎԱԾ VII***Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող ստուգման
ընթացակարգը**

3-րդ և 4-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համապատասխանությունն ստուգելու նպատակներով անդամ պետությունների մարմինները կիրառում են ստուգման հետևյալ ընթացակարգը՝

1. Անդամ պետությունների մարմիններն անցկացնում են մեկ միավորի փորձարկում՝ յուրաքանչյուր մոդելի համար:
2. Փոշեկույի մոդելը համարվում է կիրառելի պահանջներին համապատասխանող, եթե պիտակի վրա և արտադրանքի տեղեկաթերթիկում առկա արժեքներն ու դասերը համապատասխանում են տեխնիկական փաստաթղթերում առկա արժեքներին, և եթե 4-րդ աղյուսակում նշված՝ համապատասխան մոդելի պարամետրերի փորձարկումը ցույց է տալիս համապատասխանություն բոլոր այդ պարամետրերի մասով:
3. Եթե 2-րդ կետում նշված արդյունքը չի ապահովվում, ապա անդամ պետությունների մարմինները փորձարկման համար պատահականության սկզբունքով ընտրում են նույն մոդելի երեք լրացուցիչ մասեր: Որպես այլընտրանք՝ ընտրված երեք լրացուցիչ մասերը կարող են ընտրվել մեկ կամ մի քանի տարբեր մոդելներից, որոնք արտադրողի տեխնիկական փաստաթղթերում նշվել են որպես համարժեք փոշեկույներ:
4. Փոշեկույի մոդելը համարվում է կիրառելի պահանջներին համապատասխանող, եթե 4-րդ աղյուսակում նշված՝ համապատասխան մոդելի պարամետրերի փորձարկումը ցույց է տալիս համապատասխանություն բոլոր այդ պարամետրերի մասով:

5. Եթե 4-րդ կետում նշված արդյունքները չեն ապահովվում, ապա փոշեկուլի տվյալ մոդելը եւ բոլոր համարժեք մոդելները համարվում են սույն կանոնակարգին չհամապատասխանող:

Անդամ պետությունների մարմիններն օգտագործում են VI հավելվածով սահմանված՝ չափման եւ հաշվարկման մեթոդները:

Սույն հավելվածով սահմանված՝ ստուգման ընթացքում թույլատրելի շեղումները վերաբերում են միայն անդամ պետությունների մարմինների կողմից չափված պարամետրերի ստուգմանը եւ մատակարարի կողմից չեն օգտագործվում որպես առավելագույն թույլատրելի շեղումներ՝ տեխնիկական փաստաթղթերում առկա արժեքները սահմանելու համար: Պիտակի վրա կամ արտադրանքի տեղեկաթերթիկում առկա արժեքները եւ դասերն ավելի բարենպաստ չեն մատակարարի համար, քան տեխնիկական փաստաթղթերում առկա արժեքները:

Աղյուսակ 4

| Պարամետրերը | Ստուգման ընթացքում թույլատրելի շեղումները |
|-------------------------------|--|
| Էներգիայի տարեկան սպառումը | Սահմանված արժեքը ⁽¹⁾ հայտարարված արժեքից բարձր է ոչ ավելի, քան 10%-ով: |
| Փոշու հավաքումը գորգից | Սահմանված արժեքը ⁽¹⁾ հայտարարված արժեքից պակաս է ոչ ավելի, քան 0,03-ով: |
| Փոշու հավաքումը կոշտ հատակից | Սահմանված արժեքը ⁽¹⁾ հայտարարված արժեքից պակաս է ոչ ավելի, քան 0,03-ով: |
| Փոշու երկրորդային արտանետումը | Սահմանված արժեքը ⁽¹⁾ հայտարարված արժեքից բարձր է ոչ ավելի, քան 15 %-ով: |
| Ձայնի հզորության մակարդակը | Սահմանված արժեքը ⁽¹⁾ հայտարարված արժեքից բարձր չէ: |

⁽¹⁾ Սահմանված արժեքների հանրահաշվական միջինը՝ 3-րդ կետով սահմանված՝ փորձարկման ենթարկված երեք լրացուցիչ մասերի դեպքում: